ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀՀ-ՄԱԱՊՁԲ-24/13-Պ

ք. Երևան «24»-ը հուլիսի 2024թ.

Անհատ ձեռնարկատեր Արմեն Սաֆարյանը, այսուհետ՝ «Վաճառող», մի կողմից, և

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս գործադիր տնօրեն Հովհաննես Մովսիսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մյուս կողմից,

(այսուհետ յուրաքանչյուրն առանձին՝ Կողմ, միասին՝ Կողմեր),

ստորագրեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետում և հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված ապրանքները (այսուհետ նաև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել Ապրանքը և վճարել դրա համար:

1.2 Պայմանագրով սահմանված Ապրանքը հանձնվելու են Վաճառողի գտնվելու վայրում՝ սույն Պայմանագրի կնքման օրվանից 1 աշխատանքային օրվա ընթացքում:

1.3 Կողմերը երաշխավորում և հավաստում են, որ իրավասու են ստորագրելու Պայմանագիրը և ունեն Պայմանագիրը կատարելու համար բոլոր անհրաժեշտ իրավունքները, թույլտվությունները և համաձայնությունները:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը Կողմերի միջև համաձայնեցված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարվելու դեպքում իր հայեցողությամբ հրաժարվել Ապրանքից կամ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրով նախատեսված բնութագրին չհամապատասխանող Ապրանք՝

i. պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

ii. չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինելու ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարել Պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 6.2 կետով նախատեսված տույժը.

iii. հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնել Ապրանքի համար վճարված գումարը, եթե Ապրանքի համար արդեն իսկ վճարվել է:

2.1.3 Եթե հանձնվել են Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա՝

i. պահանջել լրացնել Ապրանքի պակաս հանձնված քանակը և վճարել Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

ii. հրաժարվել հանձնված Ապրանքից և դրանց դիմաց վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար արդեն իսկ վճարվել է՝ պահանջել վերադարձնել վճարված գումարը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

i. ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքից.

ii. հրաժարվել հանձնված Ապրանքից.

iii. պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով և պահանջել Վաճառողից վճարել Պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև՝ 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.5 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագիրը լուծելուց հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով

սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար Գնորդի կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերի չափով:

2.1.6 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը: Ընդ որում, Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

i. մատակարարվել է անպատշաճ որակի և/կամ տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

ii. Ապրանքի մատակարարման ժամկետը խախտվել է 5 (հինգ) օրից ավելի:

2.1.7 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետում և հասցեով մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում, Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի որակի, քանակի, տեսականու մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ լինելու դեպքում, Վաճառողի ներկայացուցիչներին տրամադրել Գնորդի տարածք մուտք գործելու հնարավորություն:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետում և հասցեով մատակարարված Ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Գնորդի համաձայնությամբ Ապրանքը մատակարարել վաղաժամկետ:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել Պայմանագրով նախատեսված որակի, քանակի և տեսակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված ժամկետում և հասցեով, իսկ Գնորդի կողմից այդպիսի պահանջ ներկայացվելու դեպքում՝ տրամադրել նաև Ապրանքի որակը հավաստող ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերը:

2.4.2 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

2.4.4 Պայմանագրի 2.1.2 կետի ii ենթակետով, 2.1.3 կետի i ենթակետով, ինչպես նաև 2.1.4 կետի iii ենթակետով նախատեսված դեպքերում, ապահովել Ապրանքի մատակարարումը Գնորդի կողմից սահմանված ժամկետում:

2.4.5 Հետ տանել Գնորդի կողմից Պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում այլ կերպ տնօրինել դրանք և հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, դրանք իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված Գնորդի կատարած անհրաժեշտ ծախսերը:

2.4.6 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.7 Պայմանագրի 2.1.6 կետով նախատեսված իրավիճակներում Պայմանագրի լուծման դեպքում, Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.8 Պայմանագրի գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում, դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

2.4.9 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրով մատակարարման ենթակա Ապրանքի ընդհանուր արժեքը կազմում է 3 177 000 (երեք միլիոն մեկ հարյուր յոթանասունյոթ հազար) ՀՀ դրամ՝ համաձայն Հավելված 1-ով սահմանված նախահաշվի: Սույն Պայմանագրի ընդհանուր արժեքը ներառում է Պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից իրականացվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման ծախսերը և այլն:

3.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվեհամարին փոխանցելու միջոցով: Մատակարարված Ապրանքի դիմաց վճարումն իրականացվում է հանձնման-ընդունման ակտի և հաշիվ-վավերագրի երկկողմանի հաստատվելուց 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Ընդ որում, սույն Պայմանագրի շրջանակներում հանձնման-ընդունման ակտի և հաշիվ-վավերագրի հաստատման օր է համարվում դրանց վրա Կողմերից վերջինի ստորագրության (կնիքի առկայության դեպքում նաև կնքման) օրը:

3.3 Վճարման ամսաթիվ է համարվում Գնորդի բանկային հաշվից դրամական միջոցների ելքագրման ամսաթիվը: Բանկային ծախսերը Գնորդի բանկում կատարում է Գնորդը, իսկ Վաճառողի բանկում՝ Վաճառողը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Մատակարարը պարտավոր է Ապրանքը հանձնելիս տրամադրել Ապրանքի որակի երաշխիք: Մատակարարի կողմից Գնորդին հանձնված Ապրանքը երաշխիքային ժամկետի ընթացքում պետք է պիտանի լինի այն նպատակներին, որոնց համար այդ տեսակի ապրանքը սովորաբար օգտագործվում է:

4.2 Երաշխիքային ժամկետի սկիզբը Գնորդի կողմից Պայմանագրի 5-րդ բաժնով սահմանված կարգով Ապրանքի ընդունումը հավաստող փաստաթղթերի ստորագրումն է: Երաշխիքային ժամկետը սահմանվում է այդ պահից սկսած 1 տարի:

4.3 Ապրանքի որակի երաշխիքը տարածվում է դրա բոլոր բաղադրամասերի (կոմպլեկտավորող տարրերի) վրա:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Ապրանքն ընդունվում են Վաճառողի և Գնորդի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքի մատակարարման պահին Վաճառողը Գնորդին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և հաշիվ-վավերագիրը:

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե Ապրանքը համապատասխանում են Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

i. հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցառումները.

ii. Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը և հաշիվ-վավերագիրը ստանալու օրվանից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության և հաշիվ-վավերագրի մեկական օրինակները կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե Պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում Ապրանքը կամ չի մերժում դրանց ընդունումը, ապա Ապրանքը համարվում են ընդունված և Պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը և հաշիվ-վավերագիրը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում Ապրանքի որակի, մատակարարման ժամկետի և տեսակի պայմանի պահպանման համար:

6.2 Ապրանքի մատակարարման համար Կողմերի միջև համաձայնեցված ժամկետի խախտման դեպքում, Վաճառողից կետանցի յուրաքանչյուր օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,13 (զրո ամբողջ տասներեք հարյուրորդական) տոկոսի

չափով: Ընդ որում, սույն կետով սահմանված տույժը հաշվարկվում է Կողմերի միջև համաձայնեցված մատակարարման ժամկետից մինչև Կողմերի կողմից սույն Պայմանագրով համաձայնեցված ծավալներով պատշաճ որակի և տեսակի պայմանի պահպանմամբ Ապրանքը Գնորդին փաստացի հանձնելու օրն ընկած ժամանակահատվածի համար:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու դեպքում, Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 10 (տասը) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

6.5 Մատակարարված Ապրանքի դիմաց վճարելու սույն Պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում, Գնորդի նկատմամբ կետանցի յուրաքանչյուր օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,13 (զրո ամբողջ տասներեք հարյուրորդական) տոկոսի չափով:

6.6 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6.7 Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը ստորագրելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 1 (մեկ) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում երկկողմանի ստորագրվելու պահից և գործում է մինչև Կողմերի՝ Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Ապրանքի մատակարարման ժամկետը Վաճառողի խնդրանքով կարող է երկարաձգվել մինչև այդպիսի ժամկետի լրանալը՝ պայմանով, որ մատակարարման ժամկետի երկարաձգման դեպքում Գնորդի մոտ չի վերանա Ապրանքի օգտագործման պահանջը:

8.3 Կողմերից որևէ մեկն իրավունք չունի սույն Պայմանագրով սահմանված իր իրավունքներն ու պարտականությունները փոխանցելու երրորդ անձի՝ առանց մյուս Կողմի գրավոր համաձայնության:

8.4 Պայմանագրից ծագած Կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած հակընդդեմ պարտավորության հաշվանցով՝ առանց Կողմերի գրավոր համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի՝ առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.5 Պայմանագրի Կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակներում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.6 Պայմանագրի յուրաքանչյուր կետ կամ պայման իրենից ներկայացնում է առանձին և ինքնուրույն դրույթ: Եթե Պայմանագրի որևէ դրույթ դատական կարգով կամ այլ իրավասու մարմնի որոշմամբ ճանաչվի անվավեր կամ կատարման ոչ ենթակա, ապա սույն Պայմանագրի մնացած բոլոր դրույթները կպահպանեն իրենց ուժը, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

8.7 Պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է, եթե այն կատարված է գրավոր և ստորագրված է Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից, կնիքի առկայության դեպքում նաև կնքված է:

8.8 Պայմանագրի շրջանակներում Կողմերի միջև փաստաթղթերի, ծանուցումների առաքումը, տեղեկությունների փոխանակությունն իրականացվում է գրավոր կերպով՝ սույն Պայմանագրի վավերապայմաններում նշված ծանուցման հասցեներով փոստային առաքմամբ կամ առձեռն հանձնելու միջոցով կամ Կողմերի համաձայնությամբ նախատեսված այլ եղանակներով:

8.9 Կողմերից յուրաքանչյուրի անվանման, հասցեի, վճարման կամ այլ վավերապայմանների փոփոխության դեպքում, համապատասխան Կողմը պարտավոր է այդ մասին պատշաճ կերպով գրավոր ծանուցել մյուս Կողմին՝ այդպիսի փոփոխությունից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում, հակառակ դեպքում՝ նախկինում տրամադրված վավերապայմաններով արված վճարումները, ուղարկված ծանուցումները համապատասխանաբար կհամարվեն ժամանակին կատարված կամ պատշաճ հասցեով ուղարկված:

8.10 Պայմանագրի առարկային վերաբերող և Պայմանագրով ուղղակիորեն չկարգավորված բոլոր հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

8.11 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է Պայմանագրի մեկական օրինակ:

8.13 Պայմանագիրը ստորագրող Կողմերի ներկայացուցիչները սույնով հաստատում են, որ ունեն բոլոր անհրաժեշտ լիազորությունները ստորագրելու սույն Պայմանագիրը և ներկայացնելու Կողմերին Պայմանագրով նախատեսված հարաբերություններում:

Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

Վաճառող	**Գնորդ**
Ա/Ձ Արմեն Սաֆարյան	**«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ**
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Հյուսիսային պողոտա 6/2	Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Գ. Հովսեփյան 26
ՀՎՀՀ՝ 85445888	ՀՎՀՀ՝ 01540062
«Ամերիաբանկ» ՓԲԸ	«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1570078447540100	Հ/Հ՝ 2050022082671001
Ա. Սաֆարյան	**Հ. Մովսիսյան** *Գործադիր տնօրեն*

Հավելված 1
2024 թվականի հուլիսի 24-ին ստորագրված N ՀՀՀ-ՄԱԱՊՁԲ-24/13-Պ պայմանագրի

ԱՊՐԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ, ԲՆՈՒԹԱԳԻՐԸ, ԱՐԺԵՔԸ

Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Անվանում	Տեխնիկական բնութագիր	Չ/Մ	Պայմանագրային գին		Ընդհանուր քանակ
				միավորի արժեք	ընդհանուր գին	
1.	***Անօդաչու թռչող սարք՝ DJI Mavic 3 Pro Fly More Combo (DJI RC PRO)***	***Անօդաչու թռչող սարք՝ DJI Mavic 3 Pro Fly More Combo (DJI RC PRO)*** ***Սա անօդաչու թռչող սարք Fly More Combo համալրմամբ և RC Pro հեռակառավարման վահանակով: Այս անօդաչու թռչող սարքը լրացնում է համակարգը երրորդ օբյեկտիվով՝ 70 մմ f/2.8 միջին հեռուստաօբյեկտիվով: Ունի 5.1K լուծաչափով Hasselblad 24 մմ լայնանկյուն օբյեկտիվ և 166 մմ հեռուստաօբյեկտիվ, որն արդիականացվել է, լուսազգայնության մեծացման և սահուն տեսապատկերների ստացման նպատակով, մինչև f/3.4 և 60 կադր/վրկ: Երեք տեսախցիկներով այս համակարգը համատեղում է ալս շարքի անօդաչու սարքերի այլ տեխնոլոգիաներ, ինչպիսիք են HD 1080p/60fps մինչև 15 կմ մեծ հեռավորությունների վրա կայուն ազդանշաններով ուղիղ հեռարձակման ընձեռման հնարավորությունը, ապահովելով խցիկով առավել ներդաշնակ տեսապատկերների ստացումը, մինչև 43 րոպե թռիչքային ժամանակով և APAS 5.0 համուղղորդված խոչընդոտների հայտնաբերման համակարգով, որոնք էլ իրենց հերթին անօդաչու թռչող սարքը անվտանգ են դարձնում նույնիսկ սկսնակ օդաչուների համար*** **Հիմնական առանձնահատկություններ** • 3 առանցքանի կախոց երեք խցիկների համակարգով • 20 MP 5.1K լայնանկյուն 4/3 CMOS Hasselblad • 12 MP 7x166 մմ zoom հեռուստաօբյեկտիվ • 48 MP 3x 70 մմ zoom միջին հեռուստաօբյեկտիվ • Թռիչքի 7 ինտելեկտուալ ռեժիմ • Առնվազն մինչև 43 րոպե թռիչքային ժամանակ • Խոչընդոտների հայտնաբերման համուղղորդված համակարգ՝ APAS 5.0-ի օգնությամբ • D-LOG, D-LOG M և HLG հետմշակման գործընթաց • Fly More Combo և RC Pro հեռակառավարման վահանակ **Երեք օբյեկտիվներով խցիկների համակարգ** • 24 մմ օբյեկտիվով 4/3 CMOS Hasselblad խցիկ՝ առնվազն 20 ՄՊ խցիկ f/2.8 - f/11 կարգավորվող դիաֆրագմայով և ցածր լուսավորման պայմաններում նկարահանման ժամանակ աղմուկների նվազեցմանը առնվազն 4/3 CMOS սենսորով, ցածր լուսավորման պայմաններում նկարահանման ժամանակ միտված աղմուկների նվազեցմանը: Այն ապահովում է 5.1K վիդեո լուծաչափ 50 կադր/վրկ-ի պայմաններում և ներառում է Hasselblad Natural Color Solution (HNCS)՝ անօդաչու սարքի միջոցով ստեղծված մեդիա ֆայլերում իրական գույների գրանցման և ստեղծման համար: Հետմշակման ժամանակ հնարավոր է օգտագործել D-Log, D-Log M և HLG: • 1/1,3 դյույմ CMOS-ով միջին հեռուստախցիկ 70 մմ հեռուստաօբյեկտիվով՝ եռախցիկ համակարգում սա նոր խցիկ է՝ առնվազն 48 մեգապիքսելանոց f/2,8 դիաֆրագմայով, և առնվազն 1/1.3 դյույմ CMOS սենսորով: Տեսանյութը նկարահանվում է առնվազն 4K ձևաչափով ՝ 60 կադր / վրկ արագությամբ, իսկ միջին հեռավորության վրա ավելի հստակ կադրեր կարելի է ստանալ 3x օպտիկական խոշորացման միջոցով: Հետմշակման գործընթացի իրականացումը պայմանավորված D-Log M-ով և HLG Night-ով, ActiveTrack և Hyperlapse տեսանկարահանման ռեժիմների ընձեռած առավելություններից օգվելու համար :	հատ	1.800.000 ՀՀ դրամ (հարկերը ներառյալ	1.800.000 ՀՀ դրամ (հարկերը ներառյալ	1

		• 1/2 դյույմ CMOS-ով տեսախցիկ է 166 մմ Zoom օբյեկտիվով՝ սա առնվազն 12 մեգապիքսելանոց տեսախցիկ է, f/3.4 դիաֆրագմայով, որը ավելի շատ լույս է փոխանցում ցածր լուսավորման պայմաններում առնվազն 1/2 դյույմ CMOS սենսորի օգնությամբ: Այն ապահովում է 4K/60 կադր/վրկ տեսագրություն 7x օպտիկական խոշորացմամբ և 12 մեգապիքսելանոց լուսանկարներով: Հիբրիդային խոշորացումը հասնում է 28x խոշորացման: **Անվտանգ թռիչքներ** APAS 5.0 տեխնոլոգիայով Omnidirectional Obstacle Sensing System-ը ակտիվորեն հայտնաբերում է խոչընդոտները թռիչքի ընթացքում և ավտոմատ կերպով ստեղծում անվտանգ երթուղիներ՝ դրանցից խուսափելու համար: **Թռիչքի ինտելեկտուալ ռեժիմներ** • Թռիչքաուղի ըստ վերահսկման կետի • Cruise Control • Hyperlapse • MaserShots • FocusTrack • Panorama • QuickShots **Գունային ռեժիմներ և ընտրանք** Լայնանկյուն, միջին հեռուստաօբյեկտիվներ և հեռուստաօբյեկտիվներ • Նորմալ (10-բիթ 4:2:2)՝ Apple ProRes 422 HQ, 422 և 422 LT • Նորմալ (8-բիթ 4:2:0)՝ H.264 և H.265 • HLG/D-Log M (10-bit 4:2:2)՝ Apple ProRes 422 HQ, 422 և 422 LT • HLG/D-Log M (10-bit 4:2:0)՝ H.265 **Լայնանկյուն օբյեկտիվ** • D-Log (10-bit 4:2:2)՝ Apple ProRes 422 HQ, 422 և 422 LT • D-Log (10-bit 4:2:0)՝ H.264 և H.265 **Լրացուցիչ հնարավորություններ** • Թռիչքի ժամանակը՝ առնվազն 43 րոպե • Տեսաազդանշանի փոխանցում առնվազն 9,3 մղոն/15 կմ հեռավորության դեպքում • Թռիչքի փորձը ավելի գրավիչ դարձնելու համար ապահովվում է ընտրված DJI Goggles 2, Goggles Integra և RC Motion 2 ակնոցներից օգտվելու հնարավորությունը: **Տեխնիկական բնութագրեր** **Դրոնի հիմնական բնութագրերը** Առավելագույն հորիզոնական արագությունը՝ առնվազն 75,6 կմ/ժ Թռիչքի առավելագույն ժամանակը՝ առնվազն 43 րոպե Տեսախցիկների քանակը՝ առնվազն 3 **Տեսախցիկների համակարգ** **Լայնանկյուն** առնվազն 20 մեգապիքսել 4/3 դյույմ CMOS սենսոր, 24 մմ համարժեք օբյեկտիվով, f/2.8 (84° FoV) **Ստանդարտ** առնվազն 48 մեգապիքսել 1/1,3 դյույմ CMOS սենսոր 70 մմ համարժեք օբյեկտիվով, f/2,8 **Telephoto** առնվազն 12 մեգապիքսել 1/2 դյույմ CMOS սենսոր 166 մմ համարժեք օբյեկտիվով, f/3.4 (15° FoV) **Վիդեոյի առավելագույն լուծաչափը** **Լայն Անկյուն** Մինչև առնվազն 5.1K 50fps-ի դեպքում / DCI 4K 120fps-ի դեպքում / UHD 4K 120fps-ի դեպքում / 1080p 200fps-ի դեպքում **Ստանդարտ** Մինչև DCI 4K 60fps-ի դեպքում / 1080p 60fps-ի դեպքում **Հեռուստաօբյեկտիվ** Առնվազն UHD 4K 60fps-ի դեպքում / 1080p 60fps-ի դեպքում **Տվիչների համակարգ՝** համուղղորդված Առավելագույն աշխատանքային հեռավորությունը՝ առնվազն 9,3 մղոն / 15 կմ Համատեղելիություն բջջային հավելվածի հետ՝ Android և iOS Պետք է համատեղելի լինի հավելվածի հետ՝ DJI Fly **Հեռակառավարման վահանակ/ հաղորդիչ**				

		Պրոֆեսիոնալ հեռակառավարման վահանակն ապահովում է 4K/120 կադր/վ ձևաչափով տեսանյութերի վերարտադրումը՝ H.264 և H.265 կոդեկներում: mini-HDMI մատույց, ունիվերսալ USB Type-C մատույցը և microSD քարտի սլոթը ապահովում են լիցքավորումը, տեսաազդանշանի պահպանումը և արտանցումը: **Աշխատանքային հաճախականություն** 2,4 ԳՀց (2,400-ից 2,4835) 5,8 ԳՀց (5,725-ից 5,850) **Առավելագույն աշխատանքային հեռավորությունը՝ առնվազն 9,3 մղոն / 15 կմ** Հաղորդիչի հզորությունը՝ առնվազն 2.4 ԳՀց՝ 26 դԲմ (FCC), 20 դԲմ (CE, MIC, SRRC) 5,8 ԳՀց՝ 26 դԲմ (FCC), 23 դԲմ (SRRC), 14 դԲմ (CE) **Հաղորդիչի մուտք/ելք** 1x USB-C (տվյալներ, սնություն) 1x USB-C (ընդլայնում) Տեսա ազդանշանի ելք՝ mini-HDMI **Մարտկոցի տեսակը՝** ներկառուցված լիթիում-իոնային (5200 mAh) **WiFi** Wi-Fi 4 (802.11n); երկտիրույթ (2.4 և 5 ԳՀց) Bluetooth 4.2 Բջջային հավելվածների հետ համատեղելիություն՝ Android և iOS Պետք է համատեղելի լինի հավելվածի հետ՝ DJI Fly Ներկառուցված էկրան՝ նվազագույնը 5,5 դյույմ (1920 x 1080) LCD սենսորային էկրան, 700 nits/cd/m^2 **Թռիչքի համար մարտկոց** Կուտակիչի քիմիան՝ LiPo 4S Մարտկոցի հզորությունը՝ առնվազն 5000 mAh / 77 Wh Մարտկոցի կոնֆիգուրացիան՝ առնվազն 17,6 Վ Լիցքավորման առավելագույն հզորությունը՝ 17,6 Վ Լիցքավորման ջերմաստիճանը՝ 41-ից 104°F / 5-ից 40°C Քաշը՝ 0,7 ֆունտ / 335,5 գ **Լիցքավորման սարք** Լիցքավորման սարքի մուտքային հզորությունը՝ նվազագույնը 100-ից 240Վ փոփոխական հոսանքնի, 50/60 Հց 2,5 Ա-ում Նոմինալ հզորությունը՝ առնվազն 100 Վտ **Ընդհանուր** GNSS-ի ապահովում՝ առնվազն GPS, BeiDou, Galileo **Լրակազմում՝** • Դրոն Fly More Combo լրակազմով և RC Pro-ով • Պրոֆեսիոնալ հեռակառավարման վահանակ • Կառավարման ջոյստիկների զույգ • 3 x թռիչքի համար ինտելեկտուալ կուտակիչներ • 6 զույգ ցածրաաղմուկ պրոպելերներ • 100Վտ հզորությամբ USB-C սնուցման ադապտեր • 100Վտ հզորությամբ USB-C սնուցման ադապտերի սնուցման մալուխ • 100 Վտ հզորությամբ մարտկոցի լիցքավորման կոնցենտրատոր • Պահպանիչ պատյան • ND ֆիլտրերի հավաքածու (ND8, ND16, ND32 և ND64) • USB-C 2 մալուխ • Ուսապայուսակ				
2.	***Անօդաչու թռչող սարք՝ DJI Mavic 3 Pro (DJI RC)(EU)***	**Անօդաչու թռչող սարք DJI Mavic 3 Pro (DJI RC)(EU)** ***DJI-ից DJI RC-ի հետ Mavic 3 Pro Drone առաջնային դիրք գրավող անօդաչու թռչող սարք է, որը լրացնում է ԱԹՍ-ի համակարգը 70-մմ f/2.8-ով երրորդ օբյեկտիվով՝ միջին հեռուստաօբյեկտիվով, ընդլայնելով ստեղծագործական հնարավորությունները տեսանկարահանումում առարկայի և նրա շրջակայքի ընդգրկման կառավարելիությունից առումով: 24 մմ լայնանկյուն 5.1K լուծաչափով և 166-մմ հեռուստաօբյեկտիվով Hasselblad օբյեկտիվը ներկայումս արդիականացվել է մինչև f/3.4 և 60 կադր/ վրկ, բարձր լուսազգայունության և ավելի սահուն տեսանկարահանման նպատակով: Երեք խցիկներից բաղկացած համակարգը միավորում է Mavic 3-ի այլ տեխնոլոգիաները, այնպիսիք ինչպիսիք են O3+ մեծ հեռավորությունների վրա հաղորդումը, մինչև 43 րոպե թռիչքը և համուղղորդված զոնդավորումը APAS 5.0-ի հետ, ինչը Mavic***	հատ	1.139.000 ՀՀ դրամ (հարկերը ներառյալ)	1.139.000 ՀՀ դրամ (հարկերը ներառյալ)	1

		3 Pro -ն դարձնում է ապահով անգամ սկսնակ օդաչուների համար: **Երեք օբյեկտիվներով խցիկների համակարգ** • 24մմ Hasselblad լայնանկյուն օբյեկտիվ; 20 ՄՊ Hasselblad խցիկը կարգավորվող f/2.8 - f/11 դիաֆրագմայով է և մեծ 4/3 CMOS-տվիչով միտված թույլ լուսավորվածության պայմաններում աղմուկի նվազեցմանը: Այն ապահովում է 5.1K լուծաչափով վիդեո՝ 50 կադր/վրկ-ի դեպքում և ներառում է իր մեջ Hasselblad Natural Color Solution (HNCS) որը ծառայում է մեդիայում իրատեսական գույների ստացման համար: Հետմշակման ժամանակ կարելի է օգտագործել D-Log, D-Log M և HLG: • Միջին չափի 70 միլիմետրանոց հեռուստաօբյեկտիվ; եռախցիկ համակարգում նոր խցիկ, 48 ՄՊ օբյեկտիվով CMOS-տվիչով f/2.8 և 1/1.3-դյույմանի դիաֆրագմայով գիշեր և ցերեկ լավորակ նկարահանումների անցկացման համար: տեսանյութը նկարահանվում է 4K ձևաչափով 60 կադր/վրկ արագությամբ, իսկ ավելի հստակ պատկերներ միջին հեռավորության վրա կարելի ստանալ եռաապատիկ օպտիկական զումի միջոցով: Ապահովվում են արդյունավետ հետմշակման համար D-Log M-ը և HLG-ը, ինչպես նաև հնարավոր է օգտագործել Night Mode, ActiveTrack և Hyperlapse նկարահանման ռեժիմների առավելությունները: • 166 մմ հեռուստաօբյեկտիվ; Սա 12 - մեգապիքսելանոց լիարժեք հեռուստաօբյեկտիվի վերադարձ է, f/3.4 դիաֆրագմայի թարմացմամբ, որը թույլ լուսավորվածության պայմաններումմ 1/2-դյույմանի CMOS օբյեկտիվի օգնությամբ թողանցում է ավելի շատ լույս՝ ավելի լավ աշխատանքի համար: Այն նաև բարձրացնում է 4K -ի դեպքում կադրերի հաճախականությոը՝ 30-ից 60 ավելի սահուն վիդեոյի ստացման նպատակով, հագեցած է նաև 7-ապատիկ օպտիկական զումով հստակ խոշոր պլանների նկարահանման համար **Թռիչքի ինտելեկտուալ ռեժիմներ** 1. Թռիչք հսկիչ կետով 2. Cruise Control 3. Hyperlapse 4. MasterShots 5. FocusTrack 6. Համայնապատկեր 7. QuickShots **Տեխնիկական բնութագրեր** Առավելագույն հորիզոնական արագություն – 47 միլ/ժ, 75.6 կմ/ժ Թռիչքի առավելագույն ժամանակ – 43 րոպե Խցիկների քանակ- 3 Խցիկների համակարգ – **Լայնանկյուն** 20ՄՊ CMOS տիպի տվիչ՝ 4/3" 24մմ համարժեքով, f/2.8 (84° FoV) օբյեկտիվով **Ստանդարտ** 48ՄՊ CMOS տիպի տվիչ՝ 1/1.3" 70մմ համարժեքով, f/2.8 (35° FoV) օբյեկտիվով **Հեռուստաֆոտո** 12ՄՊ CMOS տիպի տվիչ՝ 1/2" 166մմ համարժեքով, f/3.4 (15° FoV) օբյեկտիվով Վիդեոյի առավելագույն լուծաչափ – **Լայնանկյուն** Մինչև 5.1K՝ 50 կադր/վրկ-ի դեպքում, DCI 4K՝ 120 կադր/վրկ-ի դեպքում, UHD 4K՝ 120 կադր/վրկ-ի դեպքում, 1080p ՝ 200 կադր/վրկ-ի դեպքում **Ստանդարտ** Մինչև DCI 4K՝ 60 կադր/վրկ-ի դեպքում, 1080p՝ 60 կադր/վրկ-ի դեպքում **Հեռուստաֆոտո** Մինչև UHD 4K՝ 60 կադր/վրկ-ի դեպքում, 1080 p՝ 60 կադր/վրկ-ի դեպում Տվիչների համակարգ – Համուղղորդված Հսկման մեթոդ – Միացված հաղորդիչ Առավելագույն աշխատանքային հեռավորություն – 9.3 միլ, 15 կմ Բջջային հավելվածների հետ համատեղելիություն - Android և iOS Հավելվածի անվանում՝ DJI Fly			

		Քաշ – 2.1 ֆունտ, 958 գ (թռիչք) Թռիչքի առավելագույն արագություն – 17.9 միլ/ժ, 28.8 կմ/ժ Վայրէջքի առավելագույն արագություն – 13.4 միլ/ժ, 21.6 կմ/ժ Քամու առավելագույն դիմադրություն – 26.8 միլ/ժ, 43.1 կմ/ժ Առավելագույն թռիչքի բարձրություն – 3.7 միլ / 6կմ Առկախման առավելագույն ժամանակ – 37 րոպե Թեքման առավելագույն անկյուն - 35 ° Ռոտորի ուրվագիծ – Quadcopter Պտուտակի չափս - 9,4x5,3" Ինքնաթիռի ներանցում/ արտանցում - 1x USB-C (տվյալներ, սնուցում, ծառայություն) Աշխատանքային ջերմաստիճան – 22-ից մինչև 72°F / 10-ից մինչև 40°C Ներքին պահոց – ինքնաթիռի կորպուսում՝ 8 ԳԲ Կայունացման ճշգրտություն - ±0,001° (անշարժ) ±0,003° (շարժվող) Աշխատանքային հաճախականություն – 2.4 ԳՀց (2,400-ից մինչև 2,4835) 5.8 ԳՀց (5,725-ից մինչև 5,850) Հաղորդիչի հզորություն – 2.4 G՝ 26 dBm (FCC),20 dBm (CE, MIC, SRRC) .8G:26 dBm (FCC), 23 dBm (SRRC), 14 dBm (CE) Մարտկոցի տեսակ – Ներկառուցված լիթիում-իոնային (5200 mAh) Wi-Fi - Wi-Fi 4 (802.11n); երկտիրութային(2,4 և 5 ԳՀց) Bluetooth - 4.2				
3.	***Անօդաչու թռչող սարքի DJI Mavic 3 Pro (DJI RC)-ի կուտակիչ***	**Անօդաչու թռչող սարքի DJI Mavic 3 Pro (DJI RC)-ի կուտակիչ** ***Կուտակիչ DJI Mavic 3-ի համար Intelligent Flight Battery Li-Pol 15.4V 5000mAh 4S*** • Մարտկոց բարձրա րդյունավետությամբ լիթիում-պոլիմերային բջիջներով • Ապահովում է մինչև 46 րոպե թռիչքային ժամանակ • Ներկառուսված ալգորիթմները ծառայում են ինտելեկտուալ մարտկոցի պաշտպանության համար • Ունակությունը 5000 մԱժ • Լիցքավորման լարումը՝ առավելագույնը 17,6 Վ • Էներգոտարողությունը՝ 65 Վտ/ժամ **Համատեղելիությունը** • Քվադրոկոպտեր DJI Mavic 3 • Քվադրոկոպտեր DJI Mavic 3 Fly More Combo	հատ	119.000 ՀՀ դրամ (հարկերը ներառյալ)	238.000 ՀՀ դրամ (հարկերը ներառյալ)	2

Վաճառող

Ա/Ձ Արմեն Սաֆարյան

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Հյուսիսային պողոտա 6/2
ՀՎՀՀ՝ 85445888
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1570078447540100

Գնորդ

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Գ. Հովսեփյան 26

ՀՎՀՀ՝ 01540062
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2050022082671001

Ա. Սաֆարյան

Հ. Մովսիսյան
Գործադիր տնօրեն